# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ներքին աուդիտի ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.12.2019թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արմինե Բարսեղյան /բացող/

Հարություն Վանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Արսեն Բաղդասարյան /գնահատող/

**1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. հասցեները |
|---|---|---|
| 1 | <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ | bdo@bdoarmenia.am |

**2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

**3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

5.1 Մասնակիցը  ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

| Չափա բաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | |
|---|---|---|---|
| | | <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | 69000000 | 118000000 | 141600000* |

* գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը

**6. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ.**

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, կասեցնել գնահատման նիստը և հրավիրել <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ին հայտով ներկայացված գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**7. Հանձնաժողովի հաջորդ /բանակցությունների/ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

7.1 Հանձնաժողովի հաջորդ բանակցությունների նիստը հրավիրել ս.թ. դեկտեմբերի 27-ին ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 27.12.2019թ. ժամը 10:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Արսեն Բաղդասարյան /գնահատող/

Արմինե Բարսեղյան /բացող/

Հարություն Վանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

**Մասնակցում էին <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝**

Մանվել Ղազարյան

Մակիչ Խչեյան

**8. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների վարման մասին**

8.1 Հայտով առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություն սահմանելով 5 րոպե տևողությամբ ժամանակ:

8.2 Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտին <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից գնի վերաբերյալ նոր առաջարկ չի եղել /հիմք՝ հավելված 1/:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**9. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին**

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողով՝**

---------------------- Ա. Ավետիսյան /նախագահ/

---------------------- Հ. Մարտիրոսյան

---------------------- Ա. Բաղդասարյան

---------------------- Ա. Բարսեղյան

---------------------- Հ. Վանյան

---------------------- Ա. Մարգարյան /քարտուղար/